ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԲԸԱՀ ԸՆԹԱՑԱԿԱՐԳՈՎ ԿՆՔՎԱԾ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Պատվիրատուն՝ Հայաստանի Հանրապետության տրանսպորտի և կապի նախարարության <<Տրանսպորտի ծրագրերի իրականացման գրասենյակ>> պետական հիմնարկը, որը գտնվում է ՀՀ, ք.Երևան, Նալբանդյան 28 հասցեում, ստորև ներկայացնում է ՏԾԻԳ-ԲԸԱՀԱՇՁԲ-2014/2ՃՀ ծածկագրով առանց գնումների հայտարարությունը նախապես հրապարակելու ընթացակարգի արդյունքում 07.08.2014թ-ին կնքված ՏԾԻԳ-ԲԸԱՀԱՇՁԲ-2014/2ՃՀ-3 պայմանագրում 2014թ. հոկտեմբերի 15-ին կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը:

Փոփոխության պատճառը	Փոփոխությունը պայմանավորված է հետևյալ հանգամանքով. Տեղանքի իրադրությունից ելնելով նվազեցվել են նախագծի <<II. Ճանապարհային հագուստ>> բաժնի աշխատանքների ծավալները:
Փոփոխության նկարագրություն:	Փոփոխության արդյունքում նվազել է Պայմանագրի գինը և Պայմանագրի 5.1 կետում կատարվել է համապատասխան փոփոխություն: Պայմանագրի թիվ 1՝ «Ծավալաթերթ-նախահաշիվ», թիվ 2՝ «Օրացուցային գրաֆիկ» և թիվ 3՝ «Վճարման ժամանակացույց» Հավելվածներում կատարվել են համապատասխան փոփոխություններ:
Փոփոխության հիմնավորում:	Հեղինակային հսկողություն իրականացնող կազմակերպության՝ «Արցախճան» ինստիտուտ ՓԲԸ-ի 14.10.2014թ տրված թիվ Ռ.Ս-174/1 մասնագիտական դրական եզրակացությունը:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել գնումների համակարգող՝ Տիգրան Ջանոյանին:

Հեռախոս՝ 010 /580-523/

Էլ. փոստ՝ tjanoyan@transportpiu.am

Պատվիրատու՝ «Տրանսպորտի ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՀ